ԱՅԼ ԸՆԹԱՑԻԿ ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ թիվ 13

Ք.Գավառ

09.02.2015թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը, ի դեմս մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ Պատվիրատու, մի կողմից,Գավառի երկրագիտական թանգարանը ի դեմս տնօրեն ՝ Բ. Հովեյանի, որը ղեկավարվում է ըստ իր կանոնադրությամբ , այսուհետ կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Կատարողը ՝Գավառի երկրագիտական թանգարանը Պատվիրատուի կողմից հատկացված ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի հատկացված միջոցների հաշվին տրվող /բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ,,Սուբսիդիաներ ՊՈԱԿ-ներին,, հոդվածով/ 17601.4 հազ. ՀՀ դրամ գումարը հատկացնել սույն պահանջ կատարողին:

1.1. Վերը նշված որոշմամբ նախատեսված ,,Այլ ընթացիկ սուբսիդիաներ ,, հոդվածով ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1515-Ն որոշումով ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանին նախատեսված ,,ՀՀ պետական բյուջեի 08. 02. 02. 01,, ծրագրով հոդվածային վերաբաշխում կատարելու մասին հավելվածի հիմքով:

1.2. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը հատկացվում է ,,Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ կազմակերպելու համար ,, ըստ նպատակային օգտագործման հանձնարարականի:

1.3. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը ներառում է աշխատանքների և ծառայությունների արժեքը, ներառյալ հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները:

2. Հաշվետվությունը

2.1. Պատվիրատուն պարտավոր է սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ուսուցմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Կատարողի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում:

2.2. Կատարողը պարտավոր է սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման մասին գրավոր հաշվետվությունը պատվիրատուին ներկայացնել ամբողջական կատարման ժամկետի ավարտից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում:

2.3. Պատվիրատուն քննարկում է սույն պայմանագրի 2.2 կետում նշված հաշվետվությունները և այդ կապակցությամբ համապատասխան որոշում է ընդունում դրանք ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն ծառայությունը համապատասխանում են սույն պայմանագրով նախատեսված ծառայություններին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Սույն պայմանագրի համաձայն պատվիրատուի կողմից հաշվետվությունը ընդունվելու դեպքում կատարողը այդ մասին եռօրյա ժամկետում գրավոր ծանուցում է կատարողին: Սահմանված կարգով ծանուցում չտրամադրվելու դեպքում հաշվետվությունը համարվում է ընդունված:

2.5. Սույն պայմանագրի համաձայն պատվիրատուի կողմից հաշվետվությունը չընդունվելու դեպքում, կատարողը պարտավորվում է անվճար՝ պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել կատարողի կողմից արձանագրված անհամապատասխանությունները: Եթե արձանագրված անհամապատասխանությունները հնարավոր չէ վերացնել, ապա կողմերի միջև հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ:

3. Նվիրաբերության տրամադրման պայմանները

3.1. Պատվիրատուն սույն պայմանագրի 1.1 կետի նշված գումարը սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում համաձայն վճարման ժամանակացույցի փոխանցում է կատարողին:

3.2. Սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարը կատարողը տնօրինում է դրամաշնորհների գումարը գործող օրենքի համապատասխան:

3.3. Սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված աշխատանքները կատարողի կողմից պետք է կատարվեն մինչև 2015թ. դեկտեմբերի 25-ը:

4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ֆորս-մաժոր/

4.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

5. Այլ դրույթներ

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

5.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ՝ գրավոր:

5.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով:

5.4. Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. <u>Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները</u>

Պատվիրատու	Կատարող
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	
Քաղաք Գավառ	
ՀՎՀՀ 08404767	ՀՎՀՀ 08100689
ՀՀ 900171078505	ՀՀ 160211000528
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	ՎՏԲ բանկ Կամո մ/ճ
Մ.Խլղաթյան	Բ. Հովեյան
Ստորագրություն	Ստորագրություն
Կ.Տ	Կ.Տ

„Գավառի երկրագիտական թանգարան․․ ՊՈԱԿ-ին 2015թ. տրամադրվելիք

գումարներն ըստ ամսական բացվածքի

Թանգարանային ծառայությունների և ցուցահանդեսների կազմակերպում

N	Ամիսը	Գումարը(հազար դրամ)՝ աճողական
1	Հունվար	-
2	Փետրվար	1513.2
3	Մարտ	3026.5
4	Ապրիլ	4477.7
5	Մայիս	5928.6
6	Հունիս	7380.3
7	Հուլիս	8851.4
8	Օգոստոս	10322.5
9	Սեպտեմբեր	11793.7
10	Հոկտեմբեր	13729.6
11	Նոյեմբեր	15665.5
12	Դեկտեմբեր	17601.4

Պ ա տ վ ի ր ա տ ու

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան

ՀՀ ՖՆ Գործառ. վարչություն

ՀՎՀՀ 08404767, Հ/Հ 900171078505

Աշխատակազմի ղեկավար՝

[illegible]

Կ ա տ ա ր ո ղ

Գավառի երկրագիտական թանգարան ՊՈԱԿ

ՀՎՀՀ 08100689

ՀՀ 160211000528

ՎՏԲ բանկ Կամո մ/6

Տնօրեն՝ Բ. Հովեյան